

## Կ Ա Ր Ծ Ի Ք

Ռաֆիկ Մերուժանի Պետրոսյանի «Սոցիալական նկրոտիզմի սոցիալ-հոգեբանական գևահատման հայեցակարգը ժամանակակից իմիգրացիոն գործընթացներում (բռնագաղթածների օրինակով)

ԺԹ.00.03 – «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության վերաբերյալ:

Վերջին տասնամյակներին աշխարհում, մասնավորապես Հարավային Կովկասում, տեղի ունեցող սոցիալ-քաղաքական, տնտեսական զարգացումների պայմաններում երկրների ներսում առաջ են եկել բազմաթիվ խնդիրներ, որոնք շուտափույթ լուծումներ են պահանջում: Դրանցում առաջնային տեղ է զբաղեցնում միգրացիայի և բռնի տեղահանվածների հասարակության մեջ ինտեգրման, հոգեբանական անվտանգության և բազմակողմանի ապահովության հիմնախնդիրը: Սակայն այն առնչվում է բազմաթիվ սոցիալ-հոգեբանական խնդիրների հետ, որոնց ուսումնասիրումը հոգեկան առողջության պահպանման, նրանց հարմարման և ինտեգրման տեսանկյունից պահանջում է մեծ ջանքեր, քանզի դրանք առնչվում են անծի կառուցվածքային և գործառնական լուրջ փոփոխությունների հետ, որոնք դրսևորվում են տագնապի, վախերի, կայուն սթրեսի, զանգվածային սոցիալական նկրողների, խուճապի և այլն: Մյուս կողմից, ժամանակակից հասարակություններում միգրացիայի հիմնախնդիրը առնչվում է հազարավոր մարդկանց սթրեսահարման, դիսկոմֆորտի, մշակութային տարբերությունների պայմաններում համագործակցության, սոցիալականացման դժվարությունների, ընդհանուր և հոգեկան առողջության պահպանման հարցերում առաջացած խնդիրների հետ, որոնք զուգակցվում են նկրոտիկ հուզական վիճակների ձևերով:

Ռաֆիկ Մերուժանի Պետրոսյանի ատենախոսական աշխատանքի թեման մեր ժամանակներում խիստ արդիական է, ունի կարևոր գիտագործական նշանակություն, առավել ևս աշխատանքի տարբեր բաժիններում առաջադրած խնդիրների լուծման գիտականությամբ, հնարավորություն է ընձեռում արդյունավետ լուծումներ գտնելու

հոգեբանական գիտության բնագավառում, առավել ևս մեր հանրապետությունում գոյություն ունեցող բուսագաղթածների ինտեգրման գործընթացում:

Ռ. Պետրոսյանի ատենախոսական աշխատանքը բաղկացած է ներածությունից, տեսական խնդիրների վերլուծման երկու գլուխներից, ինչպես նաև իմիգրացիոն գործընթացներում սոցիալական ներոտիզմի սոցիալ-հոգեբանական գնահատման հայեցակարգի եքսպերիմենտալ հետազոտական երրորդ գլխից: Օգտագործված է հիմնախնդրին վերաբերվող հայերեն, անգլերեն, ռուսերեն 220 գրական աղբյուր, տեղ են գտել նաև աշխատանքի բովանդակությունն ամբողջականացնող 9 հավելված: Ատենախոսական աշխատանքի տեսական և եքսպերիմենտալ հետազոտություններին վերաբերվող հիմնարար արժեքները արտացոլված են աղյուսակների, դիագրամների, սխեմատիկ նկարների տեսքով, որոնք ընդգծում են հետազոտական աշխատանքների իրականացման բարձր մշակույթն ու ստացված արդյունքների վիճակագրական հաշվարկների հավաստիությունը: Տեսական և հետազոտական գլուխներն ամփոփվում են կատարված աշխատանքի բովանդակությանը համապատասխանող եզրակացություններով:

Աշխատանքի ներածության մեջ հիմնավորվում են թեմայի կարևորությունն ու արդիականությունը, ներկայացվում աշխատանքի նպատակն ու խնդիրները, հիմնախնդրի ուսումնասիրման վերաբերյալ կոնկրետ հեղինակների հայեցակարգերի հիման վրա կառուցվող հետազոտական աշխատանքների հիմնավորումները: Առաջադրված հիպոթեզը իր ապացուցողական պահանջներով արտացոլվում է տեսական գլուխներում արված վերլուծություններում և եքսպերիմենտալ հետազոտություններում: Հետազոտության մեթոդների մարտկոցը, վիճակագրական մաթեմատիկական ապարատը համապատասխանում է առաջադրված խնդիրների լուծման բոլոր պահանջներին: Աշխատանքի նշված բաժնում ներկայացվում են հետազոտության օբյեկտը, առարկան, վարկածը, պաշտպանության ներկայացվող դրույթները, աշխատանքի գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը և այլն: Դրույթների ձևակերպումներն արված են գրագետ, գիտական պահանջների շրջանակներում:

Ռ. Պետրոսյանի ատենախոսական աշխատանքում ներկայացվել են հոգեբանական տարբեր ուղղությունների ներկայացուցիչների հիմնադրույթները՝ քննարկվող

Երևույթների վերաբերյալ, ինչպես նաև սոցիալական նկրոտիզմի, սոցիալական ֆրուստրացիայի, խմբային հուսալիության և ներանձնային ու միջանձնային կոնֆլիկտի ժամանակակից գիտական մեկնությունները: Դրանցում քննարկվում են հոգեվերլուծական, հումանիստական ուղղությունների ներկայացուցիչների (Զ. Ֆրոյդ, Ա. Վոլեր, Ֆ. Պերլս, Կ. Յորնի, Գ. Այզենկ) գաղափարները սոցիալական նկրոտիզացիայի վերաբերյալ: Կարևորություն են ներկայացնում նաև հոգեբուժական Ս. Դիբերսոնի, տագնապայնության և սթրեսի հաղթահարման Յ. Իզզարդի, Մ. Ռոլոյի, Պ. Չիանարոսի, Տ. Վեյգերի, Կյանքի սցենարների Վ. Սկլեյնիսի, միջանձնային կոնֆլիկտների վարքային և հուզական բաղադրիչների Ե. Անցելոյի, ինչպես նաև՝ նկրոտիզմի անձնային ասպեկտների Ն. Տուրիանոյի, Ե. Գրեհեմի, Մ. Վեսթոնի, Տ. Վիդիգերի, Զ. Օլթմանի և այլոց տեսամեթոդաբանական մեկնությունները:

Ո. Պետրոսյանի ատենախոսական աշխատանքի առաջին գիյում ամփոփված են սոցիալական նկրոտիզմի տեսական բնորոշումների սոցիալ-հոգեբանական վերլուծությունը: Մասնավորապես, սոցիալական նկրոտիզմի հիմնախնդրի տեսական մեկնությունների արդյունքում ընդգծվում է դեռևս լիարժեք չուսումնասիրվածության բացը, տարբեր դպրոցների, հեղինակների կողմից սոցիալական նկրոտիզմի սոցիալ-հոգեբանական բնորոշումների գործում գոյություն ունեցող բացթողումները: Անդրադարձ է արվում քաղաքակրթությունների ռազմաքաղաքական բախումների, տնտեսական մրցակցության, մշակութային ակտիվ շփումների պայմաններում անձի, խմբերի համագործակցության բնական և հարկադրական փոխգործակցության պայմաններում ձևավորվող սոցիալ-հոգեբանական երևույթների, դրանց արդյունքում առաջացող սոցիալական նկրոտիզմի պատճառականությունները, անձի, խմբերի վարքային փոփոխության հոգեբանական առանձնահատկությունները: Տեսական վերլուծությունների առաջին գլուխը ամփոփվում է եզրակացություններով և հիմնախնդրի լուսաբանման սոցիալ-հոգեբանական կողմերի տեսական և կիրառական կողմերի նշանակալիության հիմնավորումներով:

«Սոցիալական նկրոտիզմի հայեցակարգը իմիգրացիոն գործընթացում» վերսագրված ատենախոսական աշխատանքի երկրորդ գլուխը նվիրված է իմիգրացիոն ժամանակակից գործընթացների սոցիալ-հոգեբանական բնութագրերի նկարագրություններին: Յեղինակը տարբեր աղբյուրների վերլուծության արդյունքում

Վեր է հանում անձի տրավմատիզացիայի պատճառականությունները, դրանցում տեղի ունեցող սոցիալական կարծրատիպերի փոփոխության պայմաններն ու մեխանիզմները: Առանձնակի կարևորվում են դեֆիցիտների պայմաններում իմիգրանտների նոր գիտակցության ծևավորման հոգեբանական մեխանիզմները, օրգանիզմի հոգեֆիզիոգիական բնորոշ փոփոխությունները, սոցիալական նոր միջավայրում մոտիվացիայի ու արժեհամակարգի փոփոխության հոգեբանական առանձնահատկությունները, անձի հարմարման ու հասարակության մեջ ներգրավվելու, իր տեղը հաստատելու բնորոշ դժվարությունները և այլն:

Այսուհետև ատենախոսության հեղինակը անդրադարձ է կատարում իմիգրացիոն գործնթացներում սոցիալական նկրոտիզմի գևահատման հայեցակարգային մեկնաբանությունների վերլուծություններին, որոնցում քննարկվում են տարբեր դպրոցների, դասականների մեկնությունները սոցիալական նկրոտիզմի բնութագրերին: Դրանցում առանձնացվում են անձնային հատկանիշների, միգրացիայի պատճառականություններին, կոմֆորտի և անձի հարմարավետության ծգտման և հարկադրվածության հանգամանքներում որոշումների կայացման, բավարարվածության գործոններին, որոնք հետագա հարմարման և ինտեգրման գործնթացներում գևահատվում են որպես սոցիալ հոգեբանական հարթակներ, իրենց հետագա կյանքի կառուցման, հետագա սոցիալ-հոգեբանական գործնթացների իրականացման համար:

Նկրոտիզացիայի ծևավորման և դրա արտահայտվածության սոցիալ-հոգեբանական բնութագրերի դրսերման մեկնաբանություններում հեղինակը հիմնվելով դասականների տեսական և Եքսպերիմենտալ աշխատանքների հիման վրա, հետաքրքիր մեկնաբանումներ է իրականացնում վերջին տասնամյակների ընթացքում հայ իրականության մեջ տեղի ունեցած բռնի տեղահանություններին, դրանց արդյունքում հասարակության մեջ ծևավորվող վերաբերմունքի, տարբեր հայացքների ու կարծիքների ծևավորման, խմբային շահերի ու նոր «ճշմարտությունների» ծևավորման սոցիալ հոգեբանական մեխանիզմներին: Մարդկության պատմությունը համարելով միգրացիայի ու ժողովուրդների շարժի պատմություն, միևնույն ժամանակ հեղինակը առանձնացնում է դրանց եթևիկական, աշխարհագրական, քաղաքակրթական ու մշակութային առանձնահատկությունների կենտրոնական դեր խաղացող գործոնային հանգամանքները: Հեղինակի կողմից հայեցակարգային առումով առանձնակի

բնութագրականներով սահմանազատվում են նաև ապրուստի համար վտանգների միջով անցնողներն ու արկածախնդիրները, որոնց գոյությունը ունեցող քաղաքացիական գիտակցության, բարոյական արժեքների տեսանկյունից դիտարկում է տարբեր հարթություններում: Տարբերվում են նաև նրանց տրվող սոցիալ-հոգեբանական գնահատականները, (այդ թվում նաև կյանքի վերաբերյալ), դրանում գոյությունը ունեցող արժեքները: Առանձնակի կարևորվում են զանազան արհավիրիքների, բնական աղետների ու պատերազմների, խաղաղ ժամանակներում խմբերի, ժողովուրդների տեղաշարժի, նրանց պայքարի արդյունքում ձևավորվող մտածողության պատճառականությունները: Դրանցում հատուկ քննարկումներ են իրականացվում նաև հասարակության մեջ ներգրավվելու գործընթացում միգրանտների ձեռքբերումների, նոր պայմաններում նրանց կողմից տրվող սոցիալ հոգեբանական գնահատականների ձևավորման հոգեբանական պատճառականություններին: Մասնագիտական գրականության վերլուծությունների արդյունքում ատենախոսության հեղինակը համակարգման շնորհիվ առանձնացնում է սոցիալական նկրոտիզացիայի հիմնախնդրի վերաբերյալ հեղինակների տեսակետները, տարբեր պատճառներով մարդկանց անհատական, խմբային, մարդկանց հոսքերի, զանգվածային տեղափոխությունների, միգրացիայի գործընթացում մարդկանց հետ տեղի ունեցող սոցիալ-հոգեբանական տեղաշարժերի, դրանց վերահսկման, ուղեկցման ժամանակակից պահանջները:

Սոցիալական նկրոտիզացիայի հիմնախնդրին վերաբերվող գրականության վերլուծություններն ամփոփվում են հեղինակի կողմից հիմնախնդրի գիտագործնական նշանակության հիմնավորումներով, արվող եզրակացություններով:

Ատենախոսական աշխատանքի երրորդ գլխում արտացոլված են ժամանակակից իմիգրացիոն գործընթացներում բռնագաղթածների սոցիալական նկրոտիզմի սոցիալ-հոգեբանական գնահատման հայեցակարգի հետազոտման հիմնախնդրները: Հետազոտության այս բաժնում ներկայացվում են նաև աշխատանքների իրականացման մեթոդաբանական պահանջները, ռազմավարական ուղղվածությունը, համակազմի ընտրության, (Արցախից և Սիրիայից բռնագաղթված 18-60 տարեկան ստուգիչ և հիմնական հետազոտական խմբերում ընդգրկված անձինք) խմբերի ձևավորման առանձնահատկությունները, դրանց քանակի և տարիքասեռային բաշխվածության հիմնավորումները:

Ներկայացված են նաև հետազոտության իրականացման փուլերն ու դրանցում իրականացվող աշխատանքների յուրահատուկ պահանջները, կիրառվող մեթոդների ընտրության, դրանց կիրառման վերջնարդյունքում ստացված տվյալների վերլուծման ընթացակարգերը:

Հետազոտություններն իրականացվում են ներգրավիչ բացատրական գրույցների ուղեկցությամբ, որոնցում իրականացվում են բռնագաղթվածների անամեստիկ և բուս հետազոտական նպատակներ հետապնդող գործընթացները։ Հետազոտություններն իրականացվել են խմբային եղանակներով, ըստ խնդիրների լուծման առաջնահերթության և հետազոտության իրականացման գիտական պահանջների տրամաբանության։ Հետազոտության արդյունքների վիճակագրական տվյալները արտացոլված են աղյուսակներում, դիագրամներում և գծանկարներում, որոնց սոցիալ-հոգեբանական վերլուծություններն ու բնութագրերը քննարկվում են արդյունքների մեկնաբանման հիմնական շարադրանքներում։

Տարիքային և սեռային տարբերակման ստուգիչ և եքսպերիմենտալ խմբերում, մասնավորապես հետազոտվել են բռնագաղթածների նեյրոտիզմի դրսերման հիմնական աստիճանները, պսիխոտիզմի մակարդակները, եքստրավերտության, ինտրովերտության աստիճանները, դրանց վիճակագրական համահարաբերակցության բնութագրիչները։ Ուսումնասիրվել են նաև տարբեր տարիքային խմբերում գտնվող բռնագաղթվածների անձնային և իրավիճակային տագնապայնության մակարդակների արտահայտվածությունը։ Բացահայտվել են անձնային և իրավիճակային տագնապի տարիքային և սեռային տարբերությունների առանձնահատկությունները, կյանքի բավարարվածության մակարդակների արտահայտվածության գնահատականները, հետաձգված կամ ուշացած կյանքի գնահատման, նկրոտիզմի և հետաձգված կյանքի փոփոխականների կոռելյացիոն փոխկապակցվածությունը, սոցիալական նկրոտիզմի ծևավորման կոռելանտների համակարգը և այլն։ Նշված փոփոխականների ամբողջությունը հեղինակի հետազոտություններում հոգեբանորեն հանդիսանում է որպես բացասական ազդեցություն, այն պարարտ հող է ստեղծում սոցիալական նկրոտիզմի դեստրուկտիվ զարգացման համար։ Հետազոտվել են նաև խմբերում դրսերվող նկրոտիզմի և սոցիալական ֆրուստրացիայի մակարդակների փոխկախյալության վիճակագրորեն նշանակալի կապերը։ Հետազոտվել են նաև խմբում

ինտեգրման բնութագրիչների արտահայտվածության աստիճանը, խմբերում, կոլեկտիվներում հայտնված անձանց սոցիալական կապերի, հոգեբանական մթնոլորտի գնահատման մակարդակները, համագործակցության համատեղելիության, հոգեկան հուսալիության դրսևորման հոգեբանական առանձնահատուկ բնութագրականները: Այսուհետև հետազոտության արդյունքների վերլուծության արդյունքում արվում են հետևողուններ և եզրակացություններ: Սոցիալական նկրոտիզմի կանխարգելման և առաջացող բնութագրիչների չեզոքացման նպատակով հեղինակը առաջարկում է մի շարք հոգեբանական միջոցներ, գործողությունների իրականացման համակարգ:

Ըստհանրացնելով տարբեր աղբյուրներից ստացված հայեցակարգային մոտեցումներն ու հետազոտությունների արդյունքում ստացված տվյալները, հեղինակի կողմից արվում է եզրակացություն առ այն, որ սոցիալական նկրոտիզմի դեստրուկտիվ գարգացումը կարող է կանխվել հետևողական, երկարատև ուղեկցվող հոգեբանական աշխատանքների և հոգեթերապևտիկ պրոցեդուրաների միջոցով:

Սակայն ատենախոսական աշխատանքում նկատվում են որոշ խնդրահարուց հարցեր, որոնց վերաբերյալ, ըստ ատենախոսական աշխատանքի կառուցվածքային բովանդակության և հետազոտությունների իրականացման հաջորդականության, կցանկանայի լսել ատենախոսի մեկնաբանությունները:

1. Հետազոտության համակազմում ընդգրկված են Սիրիայի Արաբական Հանրապետությունից և Արցախից բռնագաղթված անձիք: Կարծում եմ, որ նրանք հանդիսանում են տարբեր մշակույթների ներկայացուցիչներ, որոնց արդյունքների վերլուծություններում պետք է որ տարբերակված մոտեցում լիներ:
2. Խմբերի ձևավորման ժամանակ բաց է թողևկած միգրանտների սոցիալ-հոգեբանական, աշխարհագրական ու այլ գործոնների հաշվառումը:
3. Կարծում ենք, որ նպատակահարմար չէ ներկայացնել մեթոդների նկարագրությունները ատենախոսության բովանդակության մեջ, առավել ևս եթե հավելվածում դրանց վերաբերյալ կան որոշ տեղեկություններ:
4. Թիվ 1, թիվ 3 և թիվ 17 նկարների լատինատառ հասկացությունների հայերեն թարգմանությունների անհրաժեշտությունը կա:

5. 98 Էջում ներկայացված աղյուսակի մեկնաբանումները հստակ չեն, բացի այդ, էջի ստորին հատվածում ներկայացված հեղինակներն ու տարեթափերը ի՞նչ նպատակով են նշագրված, երբ վերլուծության մեջ որևէ խոսք դրանց մասին չի հիշատակված:

Միաժամանակ պետք է փաստենք, որ կատարված դիտարկումները բոլորովին չեն ստվերում ատենախոսության գիտական արժեքը:

### Եզրակացություն

Ռաֆիկ Մերուժանի Պետրոսյանի «Սոցիալական ներոտիզմի սոցիալ-հոգեբանական գնահատման հայեցակարգը ժամանակակից իմիգրացիոն գործընթացներում (բռնագաղթածների օրինակով)» ԺԹ.00.03 - «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսական աշխատանքը իր կառուցվածքով և բովանդակությամբ համապատասխանում է ատենախոսություններին ներկայացվող պահանջներին և << գիտական աստիճանների շնորհման կարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակը՝ Ռաֆիկ Պետրոսյանը «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հավակնած գիտական աստիճանին:

Հոգեբանական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր՝




Մելս Մկրտումյան

«Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ. Մկրտումյանի  
ստորագրությունը հաստատում եմ»



Խ. Աբովյանի անվան հայկական պետական  
մանկավարժական համալսարանի գիտքարտուղար,  
մանկավարժական գիտությունների թեկնածու,  
դոցենտ՝



Մարիամ Իսպիրյան

Զ. 12. 2016թ.